

նում, նա ծնունել է այստեղ իր ճակատագրի բերմամբ եւ ապրում է բնական իր միջավայրում: Այստեղ չկան ձեր զեղեցիկութեան վայելուղ Կուսարօշինտայի ոսկէ զարդերը, պալատները մեծ դահլիճները, գոյնզգոյն մարմարէ սեղանները, փորագրուած փայտէ առաստաղները, քանդակուած դռները եւ ոսկեգօծ բազկաթոռները: Ամէն ինչ հասարակ է, Աւետարանի մտքի նման հասկանալի եւ խոր, ներուժ դրացումի նման զսպուած, իրական եւ անհրաժեշտ:

«Երեւակայում եմ, ինչքան դուք տառապեցիք երէկ դիշեր: Դռան ետեւ կանգնած, խեղճ մի հայ կին լալազին աղօթում էր մինչեւ առաւօտ, տառապում, կսկծալի հառաչանքների մամուկներ շարում զանգակատան վարը, ու մինչդեռ, ձեր հարեւանները պատերի վրայ տանջուած էին նրա հետ, սարսուռ, գունաթափուում, սպրդնում, դուք, նագելի տիկին, չէիք հասկանում այդ օտար, ոչ լատին լեզուն ու երազում էիք Վատիկանի հեռաւոր եւ չքեղ դահլիճների մասին, ուր ոսկեգօծ պերճանք է տիրում, զեղարուեստական նրբութիւն եւ զրուրիցերիական դիւրութիւնների վսեմ կեցուածքը:

«Ներողութիւն եմ խնդրում, տիկին: Տգլտութիւնը միշտ էլ դատասպարտելի է, բայց անճաշակութիւնը ոճիր է: Հայ ոգին մեղաւոր չէ. նա ձեզ չի կանչել, նա ձեր մասին տեղեկութիւն իսկ չունի, եւ եթէ դուք տանջուած էք, հաւատացէք, տանջում ենք եւ մենք: Թէ՛ դուք եւ թէ՛ մենք, պարզապէս զոհ ենք տխմար առեւտրական մի ճամբորդի, որ մտել է հայ ուղեղի մէջ, եւ չգիտէ թէ ինչ է անում... Ներեցէ՛ք»:

Ռաֆայէլի մադօնայի աժան այս արտանրկարի առջեւ բեմերանս արի եւ դուրս եկայ:

* * *

1919-ին Հայաստանը պարում էր հրաբուխի վրայ: Փողոցներից վառօդի եւ արիւնի հոտ էր գալիս: Դաղթականների տեղը բալան-բալան այրում էր թուփերի մէջ, որտեղից ոչ մի աստուածաշնչական ձայն չէր լսւում: Եւրոպական դրեզնատուրը բնկղմում էր, ու մենք երբում էինք անհանգիստ ալիքների վրայ:

Հոգեկան մեր դրութիւնը պարզապէս հիւանդագին էր: Տիֆոյից տառապողի նման ան-

կողինից փախել դաշտերի մէջ վազում էինք եւ օդ, օդ փնտռում:

Այն օրերին ես տեսայ թէ ինչպէս վայրենացած մարդիկ թուրերի պարն էին պարում՝ կատաղի ուրախութեան հերարձակ մի արտայայտութիւն, որը ցեղի կենսունակութիւնն էր բնորոշում: Մարդիկ գնում էին մեռնելու կամ սպաննուելու բնականօրէն, զոհաբերողի եւ զոհաբերուողի էական ժեսալը մատուցանելով կեանքին, եւ եկեղեցին, հեռուից, սառած թռչունի նման տարածել էր իր թեւերը, իբրեւ օրհնութեան նշան եւ ուրուականացած տեսիլք:

Փոթորիկներից առաջ բնութեան դապուած շունչի նման Հռիփսիմէն սիրտը թաղել էր, եւ Արարատեան դաշտը անձայն փռուել էր հայ կեանքի կենտրոնում:

Հայկական ողբերգութիւնը ցնցել էր մեր արտաքին գիտակցութիւնը: Դէպքերը մրճահարում էին մեր մարմինը, բոցալառում մեր երակներում ու դնդերի մէջ կապար հալում: Հայ ուղեղը կոտրած ջերմաչափի նման վայր էր գցել իր սնդիկը եւ փշուր փշուր վազում էր քրտինքի եւ արիւնի մէջ: Գոյութեան անոզօք կուռի առջեւ՝ անցեալը խորտակել էր իր հօգին եւ մեր ենթագիտակցութեան մէջ յիշատակները իջել էին Սոր Վերապ:

Չգիտէիր՝ ուրախանա՞լ թէ լալ: Յամենայն դէպս մեծ ցանկութիւն կար ապրելու: Մեծ ճիգ՝ խարազանել յուսահատութիւնը, վշտի կոկորդին դանակ անկել, սարսափի աղիքների մէջ վհուկի աչքերով բախտ կարդալ:

* * *

Յիշում եմ՝ մի օր, վեհարանից դուրս եկայ ու քայլերս ուղղեցի դէպի Հռիփսիմէ: Վաղարշապատի փողոցներից ցեխի, թրիքի եւ մածունի հոտ էր գալիս: Առեւտուրը՝ ճոռան սայլի վրայ նստած՝ կաղամբ էր բաժանում, եւ հայ գիւնուրները իրենց ձիւրն էին լուսնում: Ծեմարանի շէնքի մօտ նիհար որբեր Քամառ-Քաթպայի կիսանդրիի շուրջը աղմկում էին վայրի հաւերի նման: Արարատի վրայ մըտածկոտ ամպեր էին թառել, բայց օդը ջինջ էր: Աղքատիկ շէնքերը կարծես նոր էին լուսցուել. ճերմակ պատերը ծփում էին ցեխերի առջեւ կախուած շորերի նման:

Մեծ օդը թմբութիւն է տալիս, բայց ներսս